



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՅԵՕՐԷՆ-ԵՄԲԱԳԻՐ
ԶԱՐՄԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ ԿԷՋԻՐԵԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 30 ԱՊՐԻԼ 1911

ԹԻԻ 16

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Սոսիալիստական Մշտոցը

ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ՄԸ ՀՈԳԵԿԱՆ ՎՐԴՈՎՈՒՄՆԵՐԸ. — Նա-

մակ առ Հրայր. — (Գ.) «Ինչո՞ւ համբուրեմ խաչը»

Յարուկինը ողո՞ւ համար է

ԾԱԳՈՒՄՆ ԵՔՐ. ՄԱՐԳԱՐԷՈՒԹԵԱՆ. — (Ա.) Մովսէս եւ

Դեռովրա

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋԸ. — Գաւառէն ծայն մը

Մահ Պ. Աղեքսանդր Մանթաշեանի

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ. — Նաբեռուան Լուրերը

ՆԵՐՍԷՍ ԵՊ. ՍՍԱԿԱՆ

ԶԱՅՐՄԱՅՐ ՔԱՀԱՆԱՅ

ԳԷՈՐԳ ՍԷՖԷՐԵԱՆ

ԳԷՈՐԳ-ՄԵՍՐՈՊ

ԽՈՐԷՆ ՔՀ. ԳԱԼԵՕՆՃԵԱՆ

ԽՄԲ.

»

Տպագր. Ց. ՏՕՂՐԱՄԱՃԵԱՆ

Սուրբան-Հանսար Մօղս-Թաշը, Թիւ 16

Կ. ՊՈԼԻՍ

ARMENIA

Ամերիկացի նշանաւոր գրագէտներու եւ գրագիտահիշներու աշխատակցու-
մամբ Ամերիկայի մէջ կանոնաւորաբար հրատարակուած գեղեցիկ պարբերական
մը, որ կը պաշտպանէ նաեւ Հայոց շահերը՝ ծանօթացնելով Հայ ազգին գրական-
նութիւնը եւ պատմութիւնը անգլիական ժողովրդին:

Armenia-ն կը պարունակէ այնպիսի գրական զմայելի էջեր, որոնք հաւա-
սապէս կը շահագրգռեն թէ՛ Հայ թէ՛ Ամերիկացի հասարակութիւնը:

Ահա՛ թէ ինչ կ'ըսէ Նիւ-Եօրք Էյմէրիքըն հանրածանօթ օրտնիրթին գրա-
կան բաժնի խմբագրապետը:

— «Armenia-ն, որ Արեւելքի չափ պայծառ ու վճիռ գրականութիւն մը կը
ցոլացնէ, կրնայ յաջողակօրէն բաղդատուել Ամերիկեան գրական Հանդէսներու
հետ, պայմանաւ որ վերջիններէն պակսեցուի վերինք նսեմացնող վաճառականա-
կան ոգին»:

Գլխիւներու եւ բարձրագոյն վարժարաններու մէջ անգլիերէն լեզուի դա-
սընթացքին հետեւող բոլոր գրասէր ուսանողներու ջերմապէս կը յանձնարարուի
այս հոյակապ պարբերականը, որուն տարեկան բաժնեգինն է միայն մէկ տոլար
Ամերիկայի, եւ տղարուկէս Թուրքիոյ համար:

Դիմել՝ Editor of Armenia

P. O. Box. 201 Madison Square Station

New York City

Ապառիկ ապսպրանքներ նկատի չեն առնուիր:

ՀԱՄԱՊԱՏՈՒՄ

Չորս Աւետարաններուն պարունակու-
թիւնը՝ շարայարելով, եւ համաձայնելով եւ
բացատրելով պատմութեամբ. — Պարզաբանեց
Մաղաքիա Արեւիկոպոլոս Օրմանեան,
(նախկին Պատրիարք). — Հրատարակիչը
Վ. եւ Հ. Տ. Ներսէսեան, Կ. Պոլիս, 1911:
Դին 25 դրշ. լաթակաղմ:

1100 ստուար էջերէ բաղկացեալ ըն-
դարձակ հատորի մը մէջ նախկին Պատ-
րիարք Ամեն. Տ. Մաղաքիա Ս. Արքեպ.
Օրմանեան ամփոփած, դասաւորած եւ
ամբողջացուցած է Լոյս կրօնաթերթին
մէջ սկսուած եւ յետոյ Արեւելքի մէջ շա-
րունակուած յօդուածներու շարքը: Հեղի-
նակին գլխաւոր նպատակն եղած է, կեր-
պով մը ժողովրդականացնել Աւետարանը,
այսինքն հաւատացեալ ժողովրդեան կա-
րողութեան, ձեռնհասութեան յարմարը-
նել: Հատորին մէջ կը պարզուին ոչ միայն
պատմական, վարդապետական, դաւա-
նական տեսութիւններ, այլեւ ժամանա-

կաղրական, տեղագրական, հնախօսական,
գրչագրական եւ լեզուաբանական տեղե-
կութիւններ: Անհրաժեշտ գիրք մը ամէն
ճշմարիտ հաւատացեալի, մանաւորապէս
եկեղեցական պաշտօնէից, եւ մանաւանդ
քահանայական դասու ստուար միծամատ-
նութեան, որ ատոր մէջ պիտի գտնէ Ա-
ւետարանները ամփոփող եւ յուսաբանող
ամէն տեսակ տեղեկութիւններ՝ առանց
այս ու այն կողմ թարթափելու: Հատորը
ճոխացած է երկու բացատրական քար-
տէսներով (Պաղեստին եւ Երուսաղէմ),
եւ երեսունէ աւելի պատկերներով:

ՀՄԱՅՆԱԿ ՔՀՆՅ. ԷՔՍԵՐՃԵԱՆ

ՏԱՐԵՐԻ ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵՁՈՒԻ

Ա. Բ. Գ. ՀԱՏՈՐ

Հարիւրին 40 գեղչ

ԿԵԴՐՈՆԱՏԱՂԻ ՓԱՓԱԶԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Սիւմպիւլիւ Խան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 30 ԱՊՐԻԼ 1911

ԹԻԻ 16

ՍՈՒՆԱՋԱՐ ՄԱՅՏՈՑԸ

Հասան Պէյլի ափ մը քաջասիրտ
Հայերը, մոլեգին խուժանին դէմ ե.
րեք օր կատաղի կռիւ մը մղելով՝ կա.
սլար եւ վառօգնին սպառնէ յետոյ,
ստիպուած էին խոյս տալ Ամանոսի
անմատչելի սարերը. իսկ ծերերը, կի.
ներ ու երախտներ, գիւղէն վեր սա.
րահարթի մը վրայ կը հաւաքուին,
վասնդի առջի իրիկունէ իրենց գիւղը
ամբողջովին կրակի էր տրուած թշնա.
միին ձեռքով: Ու ադ սարահարթին
վրայ, (ուր դէպքէն յետոյ կառավա.
րութեան օժանդակութեամբ նոր ե.
կեղեցի մը կառուցեր էին, զոր այս
օրերս քանդել տուաւ Ատանայի կու.
սակալ ճէմալ պէյը.) հոս ամբողջ գի.
շեր բաց օդին մէջ լաց ու կոծով
կ'անցընեն: Առտուն զինեալ խուժանը
կը խուժէ աս անպաշտպան գծադղ.
ներու վրայ՝ արինկզակ ու պատառոզ
գալլերու նման. հոս կը փրթի սրտա.
ճմլիկ վախաստուն մը, աղէխարշ ճիչ
մը, որուն կ'արձագանգեն լեռներն ու

ձորերը Ամանոսի: Լալիրշ ու Լիտի Պա.
շպօզուքները՝ կը սկսին իրենց գազա.
նային գործին. ու ապա ադ եղկելի.
ները կիսամերկ ու մարած վիճակի
մէջ քաշկռտելով կը տանին Պախճէի
կառավարչատունը, իրենց վերապահե.
լով մանկամարդներն ու գեղեցիկ.
ները:

Ասդին՝ լեռներու ծերայերը, մա.
ցառներու մէջ պահուրտած կը մ'նան
գիւղին քահանաները, մաս մը ալրեր
ու կիներ: Գիւղիսէն հոն արդէն խու.
ժանին օգնութեան հասած էին բա.
ւական թիւով զինուորներ, որ կը սկսին
փողահարութեամբ պահուրտած հա.
յերը հրաւիրել, երգում ընելով Փառի.
շահին ու Մարգարէին անուան որ պիտի
պաշտպանուին. ու հազիւ թէ պահ.
ուրտած խեղճերը իրենց գոյութիւնը
ցոյց կուտան ու կը համախմբուին
զինուորներու շուրջ, հոս կը սկսի պաշ.
տօնական ջարդը: Հասան Պէյլի 80
տարեկան ծերունի քահանային կ'առա.
ջարկեն իսլամութեան կրօնքը ընդու.
նիլ. քահանան գետին կը խոնարհի,
քիչ մը հող կ'առնէ, կ'աղօթէ, եւ կը

գնէ իր բերանը, ու իր դահիճներուն գառնալով կ'ըսէ. «Ձինուոր տղաքս, ես 80 տարեկան ծերունի մըն եմ, կրօնափոխ ըլլալէն աւելի՝ աս աշխարհէն փոխուիլը նախամեծար է ինծի. ես ձեզի յանձնուեցայ սա քանի մը ընտանիքներով. իբր օսմանցի քաջարի զինուորներ եթէ չէք ինայեւր կեանքիս՝ կրնաք գնտակով մը սպաննել զիս. բայց պիտի խնդրէի որ ճիշդ սրտէս զարնէք, որպէս զի շատ չչարձարուիմ»։ Ձինուորները, սակայն, առանց Պաշտպանութեան աւելորդ յոգնութիւն մը պատճառելու՝ տեղն ու տեղը գնտակահար կ'ընեն քահանան, ու ապա կը սկսին սուլիներով ծակծակել անոր մարմինը։

Հասան Պէյլիի ահաւոր ու քստմանեցողիչ ջարդէն յետոյ՝ ողջ մնացած Հայեր տաան եւ հինգ օր վերջը վերադարձած իրենց այրած ու մոխրացած գիւղը, սկսան ասդին անդին իրենց սիրելիներու ինկած դիակները հաւաքել ու թաղել։ Դտան Տ. Պետրոսի մարմինն ալ, ու երբ բզկտուած վերարկուն ու պարեգօտը կը հանէին պատանքելու համար, անոր կրծոց վրայ գտան իր արիւնոտ Մաշոցը որ իր հօտին սիրովը բաբախող սրտին հետ սուլիահար եղած էր։

Մեր վիճակային այցելութեան՝ երբ Հասան Պէյլի հասանք, նոյն Մաշոցը ցոյց տուին, եւ ես իբր արիւնոտ յիշատակ մը առի ադ սուլիահար Մաշոցը, յանձնելու համար Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին, որպէս զի յատուկ յիշատակազրով մը պահել տան վանքին գանձարանը։ Աս Մաշոցով շրջեցայ գիւղէ գիւղ, ու երբ Ֆաւրը ըստած հայ գիւղը հասայ, ուր հազիւ թէ 5-6 այր մարդ էր մնացեր 60 հոգիէ բաղկացած բնակչութենէն, քանի մը տարիքոտ այրի կ'ընեն խնդրեցին որ

չմըտուած չորս երախաներ կան, զանոնք մըրտեմ։ Անմիջապէս տաշտի մը մէջ տաք ջուր պատրաստել տուի, ու սկսայ՝ լացող ու լացնող այրիներէ շրջապատուած՝ կասարել մըրտութեան կարգը. ու երբ տղոց անունները կոչելու կարգն եկաւ, պահ մը կեցայ առաջին մանչին վրայ. անուններ մտածեցի, սիրուած ու սլաշտուած անուններ հայ նահատակներու եւ ինկելի անուններու ցանկը երամովին մէկիկ մէկիկ անցուցի մտքիս յուշատետրի թերթերը թղթատելով, ինչ գնէի ադ գիւղի, ադ սարերու զաւկին անունը։ Նայեցայ մէյ մը երախային կայծկտուն աչուկներուն, թունկոյ թունկոյ իրանին, կայտառ ու քաջակամ, նայեցայ մէյ մըն ալ ձեռքս բռնած արիւնոտ ու սուլիահար Մաշոցին, ու կոչեցի երախային անունը ՍՈՒԻՆ։

Երբ իսլահիյէ գաւառակը հասայ, գիշերը հեռագիր մը առի, Հասան Պէյլիի Եկեղեցիին քանդուած գուժող, Յուրտ սարսուռ մը փշաքաղեց հոգիս, ու յանկարծ մտքիս ու աչքիս առաջին եկան սարահարթը, անոր վրայ հաւաքուած հայ կ'ընեն ու երախաները, պղծուած պարկեշտ հայ կոյսերը, գնտակահար ծերունի քահանան, անոր արիւնոտ ու սուլիահար Մաշոցը, Ամանոս լեռնի կաղքին վրայ քար ու քանդ եղած Ֆաւրը հայ գիւղակը, ու հոն միւսնէն աւելի արցունքներովս մըրտուած անմեղ երախան։

ՍՈՒԻՆ։

Ա.ՏԱՆԱ

ՆԵՐՍԷՍ ԵՊԻՍ ՍԱԿԱՆ

ՍԴՍ.ՀԱՆԴԻՍԸ, ի յիշատակ ողբացեալ Ռեթէո Պէրպէրեանի, յարգանքի փայլուն ցոյց մը եղաւ բազմադիւն դաստիարակին ըմբոստ բանաստեղծներ արժանաւոր ներքողը ըրին հոգոցելոյն, ի վեր հանելով անոր տաղանդին զանազան փուլերը, Նուիրաւորութիւններ եկան՝ հսկակոյտին վրայ շքեղ դամբարան մը կանգնելու նպատակին համար։

ԵՐԻՏԱՍԱՐԴԻ ՄԸ ՅՈԳԵԿԱՆ ՎՐՈՎՈՒՄՆԵՐԸ

ՆԱՄԱԿՆԵՐ ԱՌ ԿՐԱՅՐ

Գ.

«ԻՆՁՈՒ ՊԵՏՔ Է ՀԱՄԱՐՈՒՄԻՄ ԽԱՉՐ»

Վերջին նամակդ որքան այժմեական, նոյնքան նորորենակ է հարցումդ. իր պարզութեան մէջ կը շօշափէ կարեւոր խնդիր մը, անձնական չհազարդական քրիստոնէական կեանքի մէջ:

Կը պատմես թէ դուն ալ, մանուկ հասակէդ գերազանցօրէն բարեպաշտ միջնորդութիւն մէջ մեծցած, յարգելի մօրդ եւ քոյրերդ հաւասար՝ տաք վերաբերում մը ունիիր կրօնական իրերու հանդէպ. ջերմեանքօրէն կը համուրէնիր Խաչն ու Աւետարանը, երկուդած յարգանքով մը կը մանկիր Աստուծոյ տաճարը, կ'երկրպագէիր այնտեղ, յարգանքի խորունկ զգացումով մը քու խուսկիդ ու մօմդ անպակաս ընկնով Ս. Սեղանէն: «Հիմա, կը գրես, դարձեալ կը մանեմ Եկեղեցի, կ'ունկնդրեմ երգեցողութեանց, կ'աղօթեմ, — այո՛, կ'աղօթեմ ալ, — եւ չեմ թիրանար իմ բարեպաշտական պարտականութեանցս մէջ. բայց ատոնք կ'ընեմ, մանկութենէ ի վեր սկսուած ունակութիւն մը ուժով եւ ոչ թէ ներքին համոզումով. Ամէն կողմէ փչող սկեպտիկ հովեր կ'սկսած մը մացուցած են սրտիս մէջ այդ կարգի սովորութեանց պէտքին եւ կարեւորութեան մասին. եւ՛ ինչո՞ւ կեղծեմ՝ այն կարծիքը գոյացուցած են մէջս թէ պարզ նախապաշարունակ են ատոնք, լաւ եւս հեթանոսական, նախաքրիստոնէական հին ժամանակէ մնացած աւելորդապաշտութիւններ, սրտնք գոյութեան պատճառ չունին ներկայ քսաներորդ լուսաւորեալ դարուն մէջ» Եւ քու բոլոր կասկածներդ, վարանումներդ կ'ամփոփես միակ բանաձեւի մը մէջ, հարցնելով:

— Ինչո՞ւ պէ՞տ է համբուրեմ Խաչը:

Հարցումիդ ուղղակի պատասխանելէ առաջ — պարզելով՝ Հայ. Ս. Եկեղեցւոյ ըմբռնումը՝ Քրիստոսի Խաչին, տէրունական եւ սրբոց պատկերներու եւ սուրբերու նշխարաց վրայ, — կ'ուզեմ, իբրեւ սրտի եւ զգացումի տէր անձ մը, ուշադրութեանդ ներկայացնել կեանքի մէջ շատ սովորական, պարզ իրողութիւն մը:

Հեռաւոր սիրելի մը ունեցած ես, ազնիւ բարեկամս, սիրելի մը՝ բառին ճշմարիտ նշանակութեամբ, մայր մը, քոյր մը, եղբայր մը, սրտակցորդ մտերիմ մը վերջապէս, որուն հետ քաղցր ժամեր անցուցած ըլլաս երբեմն, վայելած ըլլաս անճառ երանութիւնը, զոր գաղափարի, զգացումներու, հակամիտութեանց նոյնութիւնը իրենց սրտերուն մէջ կրող անկեղծ հոգիներու հաղորդակցութիւնը միայն կրնայ պարգեւել մարդուս: Պատահած չէ՞ որ դժեմ պարագաներու բերումով, — անխուսափելի՝ մարդկային կեանքին մէջ — ստիպուած ըլլաս բաժնուիլ այդ սիրելիէդ: Այդ պարագային որքան սրտատրոփ կը սպասես արդեօք նամակատան ցրուիչին, որ քու բարեկամիդ մէկ գիրը պիտի բերէ քեզի, թղթի կտոր մը, որուն մէջ կը կարծես գտնել քու սիրելիդ հոգիի պատկերացումը: Այդ թուղթի կտորը քեզի համար կը դադրի անշունչ առտրկայ մը ըլլալէ. կեանք մը կը ներկայացնէ ան՝ սիրտով եւ զգացումներով թրթռուն:

Երբէք հեռացած ես քու ծննդավայրէդ, ունի՞ս սրտիդ մէջ սէրը հայրենի երկրիդ, որուն հողն ու քարը, մարդիկն եւ իրերը անուշ տխրութիւնով մը կը համակեն հոգիդ, ամէն անգամ որ յիշատակներուդ էջերուն մէջ պրպտումներ ընելու առիթն ունենաս: Այնտե՛ղ են քու մանկութեանդ բոլոր յիշատակները, այնտե՛ղ ապրած ես կեանքիդ ամէնէն երջանիկ օրերը, այնտե՛ղ են քու սիրելիներդ. քու հայրենիքիդ համայնապատկերը՝ մըտքիդ առջեւ պարզուած՝ սարսուռով կը պատէ զքեզ. եւ երբ առիթն ունենաս մէկ լուսանկարը ստանալու հայրենի տեւաբանի մը, հայրենի սրբավայրի մը, կամ

հայրենիքին մէջ ապրող սիրելիի մը, օ՛հ, վստահ եմ որ առաջին շարժումդ պիտի ըլլայ գորովի անդիմադրելի թափով մը համբուրել այդ թուղթի կտորը, որ քեզի համար խտացումն է հայրենիքիդ եւ այնտեղ ապրող բոլոր սիրելիներուդ կեանքով զեղուն յիշատակին :

Մահը տեսած ես երբէք, սիրելի՛ բարեկամս. աւանդ, ո՛վ չէ տեսած այդ ահաւոր ուրուականը, որ ամէն տեղ կը մտնէ, արքայական պալատներէ սկսեալ մինչեւ յետին աղքատին խրճիթը, վիշտ եւ տըխրութիւն սփռելով ուր որ այցելէ, սիրտեր փեռեկտելով, ծաղկատի կեանքեր խելով ընտանեկան անուշ բոյներէ, որոնք սգաստաններ կը դառնան այնուհետեւ : Դիտած ես թէ ո՛րքան գուրգուրանքով կը պահուի սգաւոր ընտանիքներու մէջ՝ անհետացող սիրելիի մը պատկերը : Որդեկորոյս մօր մը սրտին վրայ մասնաւոր տեղ մը ունի լուսանկարն իր զաւակին որ ոչ եւս է : Համբուրելի՛ յիշատակ մըն է ան՝ ընտանիքի բոլոր անդամներուն համար, որոնք այդ լուսանկարին — միշտ թուղթի կտոր մը — վրայ կը տեսնեն իրենց կորուսեալ սիրելին՝ միտով, ուկորով ու . . . հոգիով ալ :

Անշունչ առարկաները կեանք ունին, հոգի ունին այն ամէն պարագաներուն մէջ, երբ հեռաւոր կամ կորուսեալ հոգեհատոր մը կամ անոր կեանքի սրտայոյզ մէկ գրուագը կը յիշեցնեն :

Վաղամուկի աղջկան մը գործածած ժանեակի կամ ժապաւէնի կտոր մը, անոր կողմէ թղթատուած հատորի մը մէջ մոռցուած ծաղկի չորցած տերեւ մը՝ արցունք կը խլէ անոր մօրը եւ ուրիշ սիրելիներուն աչքերէն : Ու վերջին ժամանակներս ո՛րքան համբուրելի պատկերներ առիթ ունեցանք ձեռքէ ձեռք խլելու, պաշտելի լուսանկարները ազգային դատին ի նպաստ իրենց անձը զոհաբերող ճշմարիտ հերոսներու, որոնց արիւնով ոռոգուեցան Հայաստանի գաշտերը, ու պողաբերուեցաւ առաջին յուսալից պտուղը թուրքիոյ ազատագրութեան :

Ինչո՞ւ այս խորունկ յարգանքը, խան-

դակաթ պաշտումը՝ անշունչ առարկաներու, լուսանկարի մը, ծաղկի թերթիկի մը, սիրելիի մը կողմէ գործածուած իրի մը նկատմամբ : Անո՛ր համար որ այդ առարկաները իրենց մէջ կը խտացնեն յիշատակ մը, կեանք մը կամ կեանքի գրուագ մը, կը յիշեցնեն մեզի սիրելի մը եւ անոր գործերը, անոր կեանքի այս կամ այն պարագաները, կը մղեն զմեզ՝ ամփոփուելու որոշ շրջանի մը, որոշ պարագայի մը, որոշ գաղափարի մը վրայ : Այդ միջոցին անանք կը դադրին ըլլալէ անշունչ առարկայ մը, ու կը դառնան կ'ըլլան գաղափարի մը, մտածումի մը, անուշ զգացումի մը խորհրդանշանը :

Խորհրդածելու այս ուղղութիւնը շարունակենք, սիրելի բարեկամս, ընդլայնելով եւ քիչ մըն ալ բարձրացնելով մեր միտքը, եթէ կ'ուզես : Ի՞նչ պատէ տեսնենք եկեղեցւոյ պատկերներուն մէջ, եթէ ոչ յիշատակը, խորհրդանշը ազնիւ գաղափարի մը, վսեմ իսէայի մը համար ինքզինքնին նուիրող հոգիներու : (Ըսենք անցողակի թէ Հայ Եկեղեցւոյ մէջ պատկերները շատ սոհմանափակ եղած են թուով, եւ վերջին ժամանակներ յունական եւ լատինական ազդեցութեամբ կամ լոկ օտարին հետեւելու ունակութեամբ է որ բազմապատկուած է անոնց թիւը մասնաւորապէս մայրաքաղաքի եկեղեցիներու մէջ) : Սուրբերու պատկերները, ուրեմն, ոչ այլ ինչ են, եթէ ոչ միջոցներ՝ յիշեցնելու մեզի անոնց տէրերուն անձնուիրութիւնները վսեմ գաղափարական համար. տեսակ մը իրաքիտական դասեր են անոնք հասարակ ժողովուրդին համար : Չէ՞ որ պտամութեան ուսման պատկերներու միջոցով աւանդու իլը մանկավարժութեան կողմէ ընդունուած նորագոյն եւ լաւագոյն մեթոտն է : Անոնք դրուած են եկեղեցւոյ մէջ, ժողովրդեան սրտին մէջ արթնցնելու աստուածահաճոյ բարի զգացումներ, զայն մղելու ազնիւ, անձնուիրական գործերու : Ու որովհետեւ այդ նպատակը նուիրական է, Եկեղեցին այդ պատկերները կ'ընդունի օրհնութեամբ եւ օծմամբ սրբագործուելէ ետքը, որով կը

պարունակեն Ս. Հոգիի Օծման շնորհաց զօրութիւնն: Եւ սակայն, պատկերները որոնք Հին Ուխտին մէջ ունին իրենց ծագումը, ըստ Հայաստ. Եկեղեցւոյ պէտք է երկրպագութիւն ընդունին: Շնորհալին իր Ընդհանրականին մէջ որոշ կը գրէ թէ «Մենք արարածներս պէտք է միակ արարչին ու Փրկչին նկարագրեալ կերպարանին երկրպագենք, իսկ Աստուծոյ մտերիմ ծառաներուն պատկերներն եւ անունները, — որոնք բնութիւնմբ ծառայակից են մեզ, — պէտք է պատուենք եւ յարգենք, իրենց տրամաւորութեան համամատ, եւ անոնց պատկերէն՝ իրենց առաքինութեան վարքը իսկ օրինակ ընենք մեզի, յիշելով անոնց զանազան ճգնութիւնները՝ ճշմարտութեան համար:» Հետեւապէս սուրբերու պատկերները, իրենց նահատակութենէն ուրիշ բան չյիշեցնելով, յարգելի են մեզի, որովհետեւ կրթիչ են եւ կապուած են անոնց աստուածահաճոյ վարքին հետ. իսկ երկրպագելի է միմիայն Փրկչի պատկերը, ըստ այնմ թէ «Յանուն Յիսուսի Բրիստոսի ամենայն ծունր կրկնեսցի» (Փիլիպ. Բ. 10): «Բրիստոսի անունն ալ ոչ այլ ինչ է, եթէ ոչ նշան մը, պատկեր մը, ձայն մը, գրութիւն մը, որ մեր հոգիին մէջ արտայայտիչ կը դառնայ անոր աստուածային մեծութեան ու փառքին, եւ մեր հաւատքը կը վառէ: Միայն զԱստուած պէտք է սլաշտել եւ անոր անուան երկրպագել, ըստ որում Աստուած անտեսանելի ըլլալով, միայն իր անուամբ տեսանելի է եւ պաշտելի: Ամէն պատկեր որ զԱստուած կը ներկայացնէ, չէ կարելի երկրպագել, ինչպէս պատուերուած է Ս. Գրքի բոլոր Մարգարէութեանց մէջ անգամ, բայց Փրկիչ է պատկեր անհրեւութիւն Աստուծոյ, (Կող. Ա. 15), Աստուծոյ էութեան նկարագիրն ու ճշմարիտ յայտնութիւնը, որ երեւցած է մեր մէջ եւ երկրպագուած իր հաւատացեալներէն, յաւիտեան երկրպագուելու համար: Նա միայն է երկրպագելի, անոր պատկերն է պաշտելի, ինչպէս եւ անոր անունը, եւ անկէ ուրիշ ամէն երկրպագութիւն եսապաշտութիւն է:» (1) Այսպէս կը պատուե-

րեն Հայ Եկեղեցւոյ Ս. Հայրերը, Ս. Գր. Լուսաւորիչ, Յովհան Իմաստասէր, Շնորհալի:

Համաձայն այդ սկզբունքին, Հայ. Ս. Եկեղեցին պատկերները կը նկատէ ոչ թէ երկրպագելի, այլ «Պատճառ երկրպագութեան համագոյ Հօր եւ Որդւոյ» Ամէն անգամ որ սուրբի մը պատկեր կ'օրհնուի, այս կը խնդրուի Աստուծոյ: Խնդրը կը տարբերի Փրկչական պատկերին համար, որու օրհնութեան ժամանակ քահանան կ'աղօթէ. «Օրհնեա՛ զսպակերս զայս եւ տուր սմա շնորհս՝ լինել յիշատակարան պատկերիդ անեղծի: Բաց ի քէն զայլ ոք ոչ գիտեմք, եւ զանուն քո անուանեմք զօրհանապազ, եւ պատկերի քում երկիրպագանեմք:»

Ուշագրաւ է սակայն Խաչի օրհնութեան ժամանակ քահանային կարդացած աղօթքը. — «Եւ օրդ, միք ծառայքս եւ հաւատացեալքս ի քեզ, արարաք զհաշս զայս, ոչ զնիւքս սորսս պաշտելով, եւ զաստուածս ձեռագործս անուանելով. այլ արարաք զսա նշան Ս. Խաչի քո, յորոյ վերայ տարածեցիր զբազուկս քո, Միաձին Որդի, Տէր մեր Յիսուս Բրիստոս: Ուրեմն ընկա՛ զսա ի ձեռաց մերոց, եւ օրհնեա եւ սրբեա զսա, լինիլ արժանի եւ կոչիլ աստուածային նշան, եւ պաշտառ երկրպագութեան համագոյ իշխանութեան Հօր եւ Որդւոյդ եւ Հոգւոյն սրբոյ:»

Հայ. Եկեղեցւոյ Ս. Հայրերու գրուածներէն եւ աղօթքներէն այս համառօտ մէջբերումները, — զորս կարելի էր բազմապատկիլ եթէ գրութիւնս սաստիկ երկարելու վախը չունենայի, — բաւական են ցոլացնելու մեր Եկեղեցիին ըմբռնումը՝ պատկերներու եւ խաչին ընծայուած յարգանքին, երկրպագութեան եւ համբոյրին մասին:

Ամփոփ ձևի մէջ պարզելու համար այդ ըմբռնումը, ըսենք թէ

Ա. Սուրբերու պատկերները ընդունուած են Եկեղեցւոյ մէջ, ոչ թէ պաշտուելու եւ երկրպագուելու համար, ու

(1) Հմմտ. Ա. Տ. Միքէլեան. — Հայաստ. Ս. Եկեղեցու դաւանաբանութիւնը:

րովհետեւ «Երկրպագելի միայն Արարչին է պատկեր եւ ոչ արարածոյն», այլ յիշեցնելու համար մեզի այն սխրագործութիւնները զորս Աստուած կատարած է անոնց միջոցով:

Բ. Փրկչի պատկերն եւ Ս. Խաչը երկրպագելի եւ պաշտելի են, ոչ թէ նիւթով, այլ սրբագործեալ հոգեւոր աստուածային զօրութեամբ, որ օրհնութեամբներկայ է իր խաչին, իր պատկերին եւ իր անուան մէջ:

Ուրեմն, սիրելի բարեկամս, յարգանքի պարզ արտայայտութիւն մըն է սուրբերու պատկերներուն ընծայուածը. ու եթէ խոնկ ու մոմ կը նուիրուին անոնց, պէտք է գիտնաս որ Հայ. Եկեղեցին բոլոր սուրբերու պատկերներուն մէջ հոգ կը տանի գնելու տէրունական նշան մը, խաչ մը կամ փրկչական Տնօրէնութիւն մը, ու խոնկդ ու մոմդ տիեզերական Արարչին կ'ուղղես, եւ ոչ թէ սղարբին եւ անոր պատկերին, զորս կը յարգես միայն, իր անձնութեան վսեմ գործերուն համար: Սխալ մը, Հայ. Եկեղեցւոյ կանոնաց հակառակ պիտի ըլլար երկրպագանել լոկ սուրբի մը պատկերին, որ մեզ նման արարած մ'է, թէեւ խորունկ յարգանքի արժանի՝ իր սխրագործութեանց համար:

Երբ կը մօտենաս ի համբոյր եւ յերկրպագութիւն Բրիտոսի Ս. Խաչին եւ անոր տէրունական պատկերին, նիւթին չէ որ կ'ընես, այլ այդ նիւթով ներկայացուած աստուածային զօրութեան, անոր փրկագործութեան խորունկ Խորհուրդին:

Խաչը խորհրդանշանն է տիեզերքի արարչին վսեմ անձնագործութեան, օծուած ու սրբագործուած խորհրդանշան մը, «աստուածային Ս. Նշան» մը, որուն պէտք է մօտենալ խորունկ ակնածանքով, պէտք է երկրպագել կատարեալ հաւատքով՝ անտեսանելի տիեզերաստեղծ Զօրութեան մը վրայ:

Եթէ կը հաւատանք Յաւիտենականին, եթէ կ'ընդունինք Աւետարանով քարոզուած ճշմարտութեանց ստուգութիւնը, եթէ հաւատք ունինք Յիսուսի մարդեղութեան

թեան եւ անոր փրկագործութեան վսեմ Խորհուրդին վրայ, եւ եթէ գիտակից ենք մարդկային ակարտութեան որ առարկայական, չօշափելի բան մը կը փնտռէ միշտ, պէտք է երկիւղիւ ու ակնածանքով մօտենանք այն վսեմ խորհուրդները խորհրդանշող Ս. Նշաններուն եւ պատկերներուն: Օհ, շատ վեր, շատ բարձր են անոնք ու շատ աւելի սիրելի պէտք է ըլլան մեր սրտին՝ քան անհետացող մտերի մը կեանքն ու գործերն յիշեցնող պարզ առարկաներ, որոնց այնքան դուրդուրանքով կը մօտենանք. անոնք զատուած են իր անհուն օէրը կը յիշեցնեն մեզի, անոնք կը բարձրացնեն զմեզ դեռագոյն Արդարութեան, գերագոյն գթութեան Աստուծոյն:

Ակնածանքով մօտենանք անոնց, սիրով համբուրենք զանոնք:

ԶԱՐԾԱՅՐ ԲԱՀԱՆԱՅ

ՅԱՐՈՒԹԻՒՆԸ ՈՐՈՒ ՇԱՄԱՐ Է

Գողգոթայի կշտին՝ պարտէզի մը մէջ՝ թափուր գերեզմանի մը եղերքը՝ «Ձէ՛ աստ, քանզի յարե՛աւ» կը ձայնէր Երկնային հրեշտակը. Մէկու մը համար, զոր ապերախտ մարդկութիւնը մահուան դատապարտեց, ասկէ մօտաւորապէս ճազարինը հարիւր տարիներ առաջ:

Այս ձայնը՝ ժամանակի հեռագործութեան մէջէն դեռ կը հնչէ մեր ականջին, կ'արձագանգէ մեր հոգիներուն խորը ու կը թրթռացնէ մեր սրտերը: Այս ձայնը՝ տարիներու ընթացքին մէջ՝ ամբողջ սերունդներ ոգեւորեց, երկիւղեց ու արհաւիրքը փարատեց, եւ մարդիկ գիտակից անձնութեան ու զոհողութեան մղեց: Այս ձայնը կեանքի յաղթութեան շեփորն է եւ մահուան թաղումին երգը:

Յարութիւն, քնքո՛յ՜ երազ, քա՛ղցր յոյս եւ սփոփալի՛ ակնկալութիւն: Ի՞նչ փոթ թէ իմաստակներու համար ցնորք մըն է այն, թէ Աստուածային ամէն խորհուրդները իրենց խեղճուկ մօթին տկար լոյսովը չօշափել ուղղը, եւ անհունու-

թիւնը իրենց համաձայն անգոր ոյժովը
չափել փորձող գիտնականներու համար բան-
դազուշանք մըն է այն եւ յիմարութիւն.
մեղի հաւատացեալներու համար՝ աներկ-
բայելի ճշմարտութիւն մըն է, անսարա-
կուսելի ստուգութիւն:

* * *

Դեռ քանի մը շարքովներ առաջ՝ եր-
կիրը դիակ մըն էր, որուն մէջ կեանքն
ու կենդանութիւնը կանգ էին առեր:
Մեռած բուսականութիւնը՝ իր գոյութե-
նէն արմատներու նշխարներ կը պահէր
միայն հողին տակ, կամ չոր կմախքներ՝
օդին մէջ ցցուած: Թմրած էր գետինը եւ
անոր երակները դադրած զարկելէ, քա-
մին ոգբեր կը մուտար անոր վերեւ, եւ
սգաւոր երկինքը պաղ արցունքներով կը
թրջէր զայն լարձրէն: Մեռելութիւն եւ
ամայութիւն կը տիրէր չորս կողմ որ
տրտմութեան թախիժով եւ ձանձրոյթի
ու անհամբերութեան ցաւով կը չարչա-
րէր մեր էութիւնը: Բայց ի՞նչ սքանչելի
փոփոխութիւն հիմա: Փշեց գարնան կեն-
սատու շունչը, եւ ահա սթափեցաւ եր-
կիրը, արթնցաւ հողը, կենդանացան բոյ-
սերը եւ հողի առին չոր կոճղերը: Այժմ
գիտե՛ցէք բնութիւնը. որքա՛ն գեղեցիկ է
ան, կեանքով ու հրապուրանքով լիցուն:
Գորշ հողերը ծածկուած են թարմ ու
կանաչ խոտերով եւ երկնքնաւ ծաղիկ-
ներով: մերկ ծառերը զարդարուած են
դալար ոստերով ու մատաղ տերեւներով:
Երկինքը կը ժպտի ուրախ. գեփիւռը կը
կը շնչէ մեղմիկ, թռչունները կը ճախրեն
երջանիկ, եւ անասունները կը խայտան
զուարթ: Թռչուններուն գեղգեղը, դե-
փուռին շունչը, առուակին մրմունջը,
միջատներուն բզզիւնը, ծառերուն սօսա-
ւիւնը զմայելի համերգ մը կը կազմեն,
ու քաղցր հեշտանքով կ'օրօրեն մեր
կեանքը: Ի՞նչ անուշ է գարունը. մեռած
երկիրը յարութիւն է առեր: Ասոր համար
ուրախ էք անշուշտ եւ կը ժպտիք:

Բայց ձեր ժպտը արցունքով չի՞ խեղ-
դուիր յանկարծ, ձեր գէմբերուն ճառա-
գայթը տխրութեան ամպով մը չի՞ մթա-

գնիր. եթէ ձեր յիշողութիւնը առաջնոր-
դեմ գէպի մեռելաստանը, ուր ծածկուած
են ձեր սիրելիներն ու բարեկամները: Ա-
նոնք չեն արթնցած. չեն վերանորոգուած
բոյսերուն հետ, չեն ազդուած գարնան
շունչէն, չեն զգար բնութեան զարթ-
նումը ու չեն վայելեր անոր գեղեցկու-
թիւնները: Մէկգի ըրէք այն խոշոր քա-
րերը՝ որ կը ծանրանան անոնց կուրծքե-
րուն վրայ, բրեցէք հողը, եւ պիտի տես-
նէք որ անոնց հուժկու կազմուածքէն,
անոնց մարմնական գեղեցկութիւններէն
բուռ մը չորաբեկ ոսկորներ, սեւ աճիւն-
ներ մնացած են լոկ: Ա՛խ, անոնք ալ եր-
բեմն մեղի պէս էին, մեղի նման կը զգա-
յին, կը խորհէին, կը խօսէին ու կը գոր-
ծէին, մեղի պէս անոնք ալ կը յափշտակ-
ուէին գարնան չքնաղ տեսարաններէն եւ
կը ծծէին անոնցմէ կաթած հեշտանքը:
Ի՞նչպէս ոչնչացան:

Բայց մի՛ վրդովուիք. բանական, զգա-
յուն եւ խորհող մարդը՝ բոյսերէն աւելի
բարձր է, ա՛ն ոչնչանալու համար չէ
ստեղծուած: Կուգայ ժամանակ յորում
ձեր անշնչացած սիրելիները կ'արթննան,
կուգայ անոնց յարութիւն տուող գա-
րունը, որ վերջ չունի, որուն ա՛լ ձմեռ
չի յաջորդեր: Անոնց աճիւններէն նոր
մարմիններ պիտի ընծիւղին. մարմիններ՝
որ ներկայինէն բոլորովին տարբեր յատ-
կութիւններով օժտուած պիտի ըլլան:
Այս մարմինը ապականութեան ենթակայ
է եւ մահկանացու. այն մարմինը անա-
պական պիտի ըլլայ եւ անմահ: Այո մար-
մինը թոյլ է եւ ակար. զեռունէ մը կը
մնասուի, սողունէ մը կը թունաւորի,
գազանէ մը կը բզքտուի. հեղուկէ մը կը
թմրի, մետաղէ մը կը կտրտուի, բարէ մը
կը ճմլուի եւ սայթաքումէ մը կը ջախ-
ջախուի: Բայց այն մարմինը չի մնասուի,
չի թունաւորուի, չի բզքտուի, չի
կտրտուի, չի ճմլուի, չի ջախջախուի:
Այս մարմինը՝ կը մաշի ժամանակէն,
կ'այրուի տաքէն, կը սառի ցուրտէն, կը
խեղդուի ջուրէն ու կազէն, կը քուի
հովէն եւ կը փչրուի կայծակէն, բայց
այն մարմինը չ'ազդուիր բնութեան կոյր

ոյժերէն եւ տարերքներէն Այս մարմինը կը հիւանդանայ, կը ցաւի, կը ծիրի, կը ծերանայ, կը յոգնի, կը ծարաւի, կ'անթիւնայ, կը դողայ եւ կը սարսափի. ո՛չ սաստիկ վշտի կրնայ դիմանալ եւ ո՛չ ծայրայեղ ուրախութեան. բայց այն մարմինը գերծ է այս բոլոր տկարութիւններէն Անոր վայելքները խորտկներու եւ քմակներու համն ու հոտը չեն, անոր հաճոյքները սեռային յարաբերութիւնները, համբոյր ու գգուանքներ չեն, այլ հանդերձեալ աշխարհի անեղծ գեղեցկութիւնները, սքանչելի բուրումնաւէտութիւնը, քաղցրալուր երաժշտութիւնը. անստուեր լոյսի ճառագայթումը եւ աստուածային ներկայութիւնն ու յայտնի տեսութիւնը. Բնակի՛լ Աստուծոյ քով, ապրի՛լ միշտ Անոր հետ, շարունակ տեսնել Յիսուսի փառաւոր դէմքը, տրբենա՛լ անոր սիրոյ քաղցրութեամբ ու լեցուի՛լ անոր փառաբանութեամբ: Ո՛հ, երանութեան ի՛նչ անհուն տիեզերք:

Եթէ ներկայ մահը շարունակութիւնն է նախամարդուն մահաւան, ապա ուրեմն ապագայ յարութիւնն ալ յաջորդութիւնը պիտի ըլլայ Յիսուսի Յարութեան: Ուրեմն աւետիս ձեզ, ո՛վ եղբայրներ ու հայրեր, քոյրեր ու մայրեր. մահէն կեանք կը ծնի եւ գերեզմանին յարութիւն կը յաջորդէ: Աւետիս ձեզ, ո՛վ թշուառներ ու չքաւորներ, որ կը տառապիք ու չէք վայելեր. ձեր տառապանքը վերջ պիտի գտնէ, եւ յարութեան բարիքները պիտի վայելէք: Աւետիս ձեզ, ո՛վ կոյրեր, որ զուրկ էք տեսութենէ. ձեր աչքերը պիտի բացուին: Աւետիս ձեզ, ո՛վ խուլեր ու համբիւրեր. զուրկ պիտի լսէք ու խօսիք: Աւետիս ձեզ, ո՛վ հիւանդներ, տկարներ, հաշմանդներ ու խեղանդամներ, ձեր մարմինները կատարելապէս պիտի բուժուին: Աւետիս ընդ՝ ո՛վ մարդկութիւն՝ որ կը սարսափիս մահուանէ. այլեւս չկայ մահ. մահը կոխուած է, մահը յաղթուած է, մահը փշրուած է:

Այո՛, յաղթուած է մահը. բայց ինչպէ՞ս Յարութիւն կա՛յ. բայց որո՞նց համար

Ամէն մարդ կրնայ յարութիւն առնել. առանց ճիգի եւ դժուարութեան կարելի՞ է յաղթուած համարիլ մահը: Չէ՛, սիրելի՛ներ, մի՛ խաբուիք: Մահուան տիրապետութենէն ազատելու եւ յարութիւն առնելու համար ապրի՛լ պէտք է Անդրանիկ Յարուցելոյն կեանքը. Ի՛նչ էր այդ կեանքը: — Տառապանքի շղթայ մը, Բեթլեհեմի այրին մատրէն մինչեւ Գողգոթայի գաղաթը երկարած:

Յիսուս գլխովին նուիրուած էր մարդկային ազգը կորստեան վիճէն ու թշուառութեան ճիրաններէն ազատելու մեծ նպատակին, եւ անոր համար տանջուեցաւ: Ան աղքատութեան ու նեղութեան մէջ ապրեցաւ. չքաւորներու ու տառապողներու հետ շփոթուեցաւ, ճնշուածներն ու զրկուածները սիրեց եւ սփոփեց: Երկրի վրայ անօթի ու ծարաւ չըլցեալ. յաճախ, լեռներու գլուխը՝ մութ գիշերները աղօթելով լուսցուց շատ անգամ, առանց իր գլուխը հանդէպեցնելու անդ մը դանելու: Համարձակութեամբ քարոզեց ճշմարտութիւնը, պախտութիւնը մոլուածիւնները, յանդիմանեց անիրաւութիւնները, եւ ասոնց համար արհամարհուեցաւ ու հալածուեցաւ ամբողջ տարիներ: Այլ ամենէն մեծ հալածանքն ու արհամարհանքը, ամենէն սոսկալի չարչարանքն ու նախատինքները վերապահուած էին իր վերջին օրերուն: Ո՛հ, Աստուած՝ իմ, ի՛նչ տաղնապալի վիճակ էր, որուն մէջէն անցաւ իր կ'անքը՝ Գեթսեմանիի պարտէզէն մինչեւ Գողգոթայի գաղաթը՝ իսաչին վրայ «էլի, էլի, յամա սաբաթթանի» գոչելը: Իսաչի մահ. զիտէ՞ք ինչ ըսել է այս. երեւակայեցէք այն դաւն ու կսկիծը. մորմոքն ու տանջանքը, զոր կը զգայ մեկը, որուն ոտքերն ու ձեռքերը երկաթի հաստ գամերով բեւեռուած են վայտին. որուն՝ գլուխը ծածկուած է փուշերով եւ երեսները թուքով. որուն մարմնոյ ամէն մասերը խոցուած են ու արիւնոտած՝ տէգերով եւ եղէգներով: Այս ամենուն վրայ աւելցուցէք սա պարագան որ անոր սիրելիներն ու յարեկամները փախած, հեռացած են անկէ. կատաղի

ամբողջ մը չըջապատուած՝ մայրն ունի իր քով միայն. մայր մը, որ իրմէ զատ ոչ ոք ունի աշխարհի վրայ եւ որ իր խաչին ստքը գրկած՝ կը հեկեկայ, կուլայ դառնաղին, արցունքի հեղեղներով կը թրջէ իր շուրջը բուսած խոտերն ու ծաղիկները եւ հուսկ յետոյ զգայաղիբի կ'իյնայ հոն՝ անկենդան դիակի մը պէս:

Յիսուս մեզի յարութիւն եւ կեանք տալու համար՝ խաչի փշալից ճամբան ընտրեց ինքնայօժար, եւ պատուիրեց մեզ քալել անկէ: Բաւած էք արդեօք այդ ճամբայէն. կրած էք երբէք ձեր ուսին վրայ խաչին ծանրութիւնը. տառապած էք իրաւունքի եւ արդարութեան պաշտպանութեան համար. աշխատած էք ձեր շուրջը լոյս ու յոյս տարածելու, յոգնած էք ձեր ազդին յառաջդիմութեանը համար. քրտնած էք ձեր ընկերին օգտին համար. զսողութիւն ըրած էք թշուառին արփունքը սրբելու համար: Եթէ ո՛չ, ուրեմն չէք կրնար ձեր մէջը կրել յարութեան յոյսը, զի «առանց խաչի չկայ յարութիւն»:

Յարութիւն չկա՛յ անոնց, որոնք խորամանկութեամբ կը խաբեն, կը ստեն, կը կեղծեն, կը շողոքորթեն, կը խարդախեն, կը զրպարտեն ու կը մատնեն:

Յարութիւն չկա՛յ անոնց, որոնք լկտի հաճոյքներու եւ ցոփութեան մէջ կը յափրանան, անձնական շահերու եւ մարմնային վախճաններու նուիրած ըլլալով իրենց ամբողջ կեանքը:

Յարութիւն չկա՛յ անոնց, որոնք հարստութեան, պերճանքի, ճոխութեան ու փարթամութեան մէջ կը լողան, երբ իրենց շուրջը կարօտութեան եւ թշուառութեան անագին ծովը տարածուած է, ուր չեն նայիր բնաւ կամ իրենց սեղանէն աւելցած փշրանքները կը նստեն միայն:

Յարութիւն չկա՛յ բոլոր թոյլերուն ու վախկոտներուն, որոնք արեւութիւն չունին իրաւունքը պաշտպանելու եւ անարդարութեան դէմ բողոքելու, որոնք ստրկութիւնը կը քաջալերեն, նուաստութեան կը համակերպին, անպատուութեան

կը հաւանին եւ խայտառակութեանց գլուխ կը ծռեն:

Յարութիւն չկայ բոլոր ծոյլերուն եւ անաշխատներուն, որոնք իրենց անձնական ոյժերն ու կարողութիւնները չեն դործածիր մարդկութեան օգտին համար, չեն կատարիր իրենց առ Աստուած եւ առ ընկերն ունեցած պարտաւորութիւնները, եւ անպտուղ ու ապարդիւն կը թողուն իրենց կեանքը:

Յարութիւն չկա՛յ բոլոր փառամոլ հպարտներուն եւ ամբարտաւան անձնասէրներուն, որոնք իրենց կարողութեան ոյժովն եւ յաջողութիւններովը կը փրանան, եւ իրենց գիտութեան հանճարովն ու ձիրքերովը կը սոնքան, որոնց գոռոզ գլուխները չեն խոնարհիր տէեգերքի Աւրարչին առջեւ՝ երկրպագութեամբ ու յարգանքով:

Յարութիւն չկա՛յ բոլոր անոնց, որոնց մէջ ցամբած է կրօնքի սէրը, մարած է հաւատքին լոյսը եւ մեռած անմահութեան յոյսը, որոնք սոսկ նիւթականին կառչած՝ կը մոռնան հոգեկանն ու յաւիտենականը, յիմարաբար կը ժխտեն Աստուծոյ գոյութիւնը եւ անոր առջեւ իրենց պատասխանատուութիւնը, կ'ուրանան հոգեւոր անմահութիւնը եւ կ'անգիտանան մարդկային բարձր կոչումը:

Ճշմարիտ, արի, մարդասէր, մաքուր ու բարեբար հաւատացեալներու, լուսաւորութեան, ազատութեան, իրաւունքի, արդարութեան, խաղաղութեան, հաւասարութեան եւ հանրային բարեկեցութեան անձնուէր մշակներու ու քրտնած ջան աշխատաւորներու համար՝ միայն ստուգապէս կա՛յ յարութիւն. կա՛յ իրական անմահութիւն, յաւիտենական երջանկութիւն:

Կ'ուզէ՞ք մի երջանիկ օր յարութիւն առնել ձեր գերեզմաններէն, ուր պիտի իջնէք քիչ յետոյ. կը ցանկա՞ք նորոգութիւն հոգին տակ թաղուած բուսական միացորդներէն բողբոջող դարնան սա գունաղեղ ծաղիկներուն պէս. արթնցէ՞ք ձեր թմրածութենէն ու անտարբերութենէն. թոթովե՞ցէք ձեր վրայէն ծուլութիւնն ու

Թաւրութիւնը. հրաժարեցէ՛ք ձեկարգ կիր-
քերէ ու մոլութիւններէ, եւ ուղղե՛ցէ՛ք
ձեզ քայլերը՝ դէպի սիրոյ, աշխատութեան,
հանրագում գործունէութեան, արցունք-
ներ սրբելու եւ թշուառութիւններ դար-
մանելու ճամբան. բարձրացէ՛ք դէպի գո-
հողութեան եւ անձնուիրութեան Դող-
դութան:

ԴԷՈՐԴ ՍԷՃԷՐՆԱՆ

Սիլվան

Այսօր հաճոյքն ունինք Տանարի բնօրհաններուն
ներկայացնելու. նոր աշխատակից մը՝ Տիար
Դէորդ-Մեսրոպ, որ տակաւին երթոտարդ
հասակին մէջ Կ. Իրարամագրութեան տակ
գտնուած քացարձակապէս անբաւական մի-
ջոցներով իսկ կրցած է կարեւոր տեղ մը
գրաւել հայ պատմա-բանասիրական աշ-
խարհին մէջ, անցեալ տարի հրատարակե-
լով «Բրիստոնէութեան մուտքը ի Հայս»
նշագրաւ գործը, եւ այս անգամ ալ «Ու-
րարտուն» կարեւոր հրատարակութիւն մը ո-
րուն ծանուցումը կ'երեւայ քիչ մը անդին:
Տիար Դէորդ-Մեսրոպ Տանարի մէջ սլար-
քերարար իրեն ուսումնասիրութեան առար-
կայ պիտի ընէ՝

Ծ Ա Գ Ո Ւ Մ Ն

ԵՐԱՅԱԿԱՆ ՍԱՐԳԱՐԷՈՒԹԵԱՆ

Ա.

Մովսէս, Դերովրա

«Երբէք եւ ոչ մէկ տեղ, բարոյական
բնագղը, գաղափարականի, պարտաւորու-
թեան, արդարութեան զգացումը, որ
մեր իւրաքանչիւրին մէջ կը նիրհէ, արտա-
յայտուած չէ աւելի պարզ եւ աւելի տիե-
զերական, աւելի բուռն ու աւելի ան-
յաղթելի շեշտերով, որքան Հրէաստանի
հին մարգարէներուն խօսքին մէջ: Հե-
տեւաբար անօրուտ չպիտի ըլլար, ան-
շուշտ, մարգարէական գործին վրայ հրա-
ւիրել ժողովուրդին զաստիարակներուն
ուշադրութիւնը, եւ արթնցնել անոնց մէջ
զայն ճանչնալու եւ զայն հասկնալու փա-
փաքը» (1)

(1) Darmesteter. Les prophètes. P. II.

Այս քառերով ու համոզումով կը խօսի
ԺԹ. դարու ձեղինակաւոր անձերէն մին,
հրէական մարգարէութեան նկատմամբ,
իրացնէ ամենէն բուռն քննադատու-
թիւնն անգամ պէտք է խոռոտովանի թէ
հրեայ Տեսանդներուն գործը մարդկային
սրտի ու մտքի պատմութեան մէջ բաւա-
կան շահեկան էջեր գրաւելու սահման-
ուած է: Անոնց զգացումները, անոնց
մտասեւեռումները, գաղափարականները
մեծ ազդեցութիւն մը գործած են ապա-
ղայ մարդկութեան ճակատագրին վրայ,
եւ նոյն իսկ, քրիստոնէական խողովակին
միջոցաւ, մեծ դեր մ'ունեցած չէ՞ն նաեւ
մեր ազգային կեանքին վրայ, հրեայ մար-
գարէները՝ իրենց գրեւակերպովը, իրենց
գաղափարներովը, բարոյական՝ կրօնա-
կան՝ շնկերական ըմբռնումներովը ազ-
դած չէ՞ն նաեւ հայ գրականութեան, հայ
մատենագրութեան վրայ, հայ բարոց ու
շմբոնումներուն վրայ:

Թողլով, սակայն, այս ամէնը, կ'արժէ
անշուշտ որ հրէական մարգարէութեան
բնութիւնն ու նկարագիրը պարզեփ
ամէնէն առաջ, անոր պատմական դիմա-
յեղումները դժեմք. որովհետեւ իր պատ-
մութիւնն ունի ան, իր ծագումը, իր
բողոքումը, իր յեղաշրջութիւնը, իր
վախճանն ունի ան: Մարդկային ու բնա-
կան գրեթէ բոլոր մեծ ու տեսական ե-
րեւոյթներու նման, իր մանկութեան
չըջանն ունի ան, իր բեղմնաւորութեան
չըջանը, իր գործին պսակումն ու իր
վերջալոյսն յուսալից: Հաբկ է ճանչնալ
անոր կեանքը, ծանօթանալ անոր ընթա-
ցած ու դժած շաւիղներուն, կարենալ
ըմբռնելու համար անոր գործին բնու-
թիւնն ու արդասիքը, անոր ոգին ու
նպատակը, անոր միջոցներն ու արժա-
նիքը:

Ինչ է, ուրեմն, անոր ծագումը. երբ,
ինչ պայմաններու տակ եւ ո՞ր ծնունդ
առած է ան, ինչ են անոր շարժիչ ու-
ժերը: Այնպիսի հարցումներ են բաժնը,
որոնց պատասխանը որքան ուշադիր
զննութեան մը արդիւնք, նոյնքան զգու-
շաւոր պիտի ըլլար Մարգարէութիւնը,

Իսրայելի ազգին մէջ, շատ աւելի հին է քնականաբար, քան մարգարէական այն գրականութիւնը որ մեր ձեռքը կը գտնուի։ Այս վերջինը անոր ամէնէն գեղեցիկ ու ամենէն վաւերական արտայայտութիւնն է, ինչպէս կը գրէ Ռոյս, եւ կ'ենթադրէ իրողութիւններու, փորձառութիւններու եւ աշխատութիւններու ամբողջութիւն մը, զոր անհրաժեշտ է ճանչնալ՝ այս իր տեսակին մէջ եզակի գրական գրականներուն հաւաքոյթը կարենալ հասկնալու համար։ Մարգարէութիւնը հրեայ ժողովուրդին չափ չին է արդարեւ (1)։

Գողգոթայի կան որ ազգերուն հետ կը ծնին նոյնիսկ, անոնց ճակատագիրը կը չլինեն, անոնց ապագան կը դարձնեն։ Մարգարէութիւնը անոնցմէ է։ Իսրայելի որդիներուն հետ, անապատի վրաններուն տակ կը սկսի յայտնուիլ անո՛ւ Ստացական բան մը չէր երբէք։ Պաղեստինի ժողովուրդներուն, Քանանացւոց եւ կամ երկրին յատուկ երեւոյթ մը չէր ան, զոր ընդգրկած ըլլան Յակոբի որդիները (2)։ Սեմական կալուածի մը վրայ բեղմնաւորուած, իսրայելեան գետնի վրայ ծլած, բուսած, ունձացած, զարգացած ու պտղաբերած է ան։ Հրէական կրօնքին ոչ թէ ծնողիւր տղ արմատն է նոյն իսկ։ Հրեայ ժողովուրդը, մանաւանդ գերութենէն ետքը, իր գողգոթայի, իր բարձրելու, իր կրօնքովն ու իր բարոյականովը երբա-

յնկան մարգարէութեան ստեղծագործութիւնը կը ներկայանայ։ զայն ներշնչող ոգիովը կը ներշնչուի, անոր յոյսերովը կը խանդավառուի, անոր կտակած գրականութիւնովը կը սնանի, անոր ցոյց տուած ուղղութիւնը կ'ընթանայ։ Իրաւ, Իսրայէլ այս վիճակին համեմու համար շատ դարերու պէտք ունեցած էր, բաղձաթիւ աղէտներու ու փորձութեանց բովէն անցած էր, իր ճակտին քրտինքովը ձեռք բերած էր մարգարէութեան կրօնական ու բարոյական բարձր կողմերը, շատ զօնարութեամբ կրցած էր թօթափել իր վրայէն նախնական բոլոր մաքուր եւ նախապաշարունակներու կեղեցանքը։ Եւ սակայն այս զարգացումի՝ բարեկշիռութեան ճամբան գծողն իր ժողովուրդը մարգարէութիւնն էր նոյն իսկ։ Մարգարէութիւնը, անապատի ժողովուրդին ու անոր պէտքերուն հետ նոր քայլեր առած էր, հետզհետէ բարձրացած ու վսեմացած, հասած էր այնպիսի բարձրութեան մը, որ կէ կրցած էր աւելի լայն հորիզոն մ'ընդգրկել, ամբողջ մարդկութիւնը դիտել։ Բնութեան մէջ, Նախաինանութեան գործին մէջ ուսում մ չկայ քնաւ։ Յոռիէն լաւը, լաւագոյնը, այս է բնութեան ճամբան։ Այս է հասեւ մարդկային յոռածիմութեան գաղտնիքը։ Բնութեան մեթոտն է այն։ Մարգարէները մարդեր էին, մարդեր որ իրենց նմաններուն կ'ուղղուէին։ Իրենց ժամանակի կնիքը իրենց ճակտին վրայ կ'կրէին անոնք։ Մանուկ մարդկութեան մը (1) մանուկ զայնակներն են։ Չարմանալի չէ, որ ընմն, որ մարգարէութիւնը իր առաջին քայլերուն մէջ վնասէր, հմայիչներու, տեսանողներու հետ կը շփոթուէր նոյն ինքի միտքի ու դժգոհի ժողովուրդի մը համար իր կախարդը կամ հմայողը՝ իր մարգարէն՝ իր վարդապետն իսկ է։ Խեղճուկ ու անձկամիտ Սաբուղ մը իր կորմացուցած էջերը գտնելու համար հասարակ տեսանող մը կը փնտռէ (2)։

(1) Reuss, Les prophètes. T. I. P. 6.

(2) Tiele (hist. des relig. P. 374) այն կարծիքը, թէ մարգարէութիւնը իսրայելի մէջ ծնունդ առած չէ, այլ քանական սովորութիւն, զոր «եհեւիզմ» (yahvisme) իւրացուցած եւ կրցած է իրեն ի նպատակ ծառայեցնել, խնդրական է բոլորովին։ Իրաւ է թէ եհեւիզմի մարգարէներուն քով Բանագներուն մարգարէներն ալ ի յայտ կուգան։ Եւ սակայն ասի բաւական չափով ըլլար Երայայական մարգարէութիւնը քանական փոխառութիւն մը նկատելու համար։ Գրէ թէ միւս բոլոր Սեմական ժողովուրդներն ալ իրենց ծագումին ու նախապատմութեան մէջ նմանորինակ երեւոյթներ կ'ընծայեն արդէն։ Հետեւաբար եթէ ուղէինք գիտական ընդհանրացում մ'ընենք, պիտի ընդունէինք թէ մարգարէութիւնը Սեմական ժողովուրդներու մէջ ծնունդ առած երեւոյթ մըն է։ Եւ թէ քիչ ինքնատէպ գոյնովը կը ներկայանայ Երայական ազգին մէջ։

(1) Գող. Գ. 3

(2) Ա. Թագ. Թ. 36 եւն.։

Ստուգիւ մարգարէութեան նկատմամբ եբրայեցի ժողովուրդին ունեցած ըմբռնումը կամ ծանօթութիւնը միշտ միեւնոյնը չէ եղած: Այն բառերը կամ յորջորջումները, որոնցմով կը կոչուէին մարգարէները, կը մատնեն ըմբռնումի այս տարբերութիւնը: Եբրայեցիներէն մէջ երբեք տարբեր անուններ, որոնց իւրաքանչիւրն իր մասնաւոր նշանակութիւնն ունի, կ'արտայայտէին այն զանազան յատկութիւնները կամ պաշտօնները, որոնցմով կը ներկայանային Եանձէի այս պատգամաբերները: Այս անուններն են. Բոեհ (= տեսանող), Նապի (= մարգարէ), եւ խոզեհ (= տեսանող) (1): Առաջին եւ երրորդը իրարմէ երանգներով կը զանազանին միայն: Առաջինը կը թուի աւելի հասարակ ու սովորական վիճակ մը ներկայացնել, մինչ վերջինը ժամանակաւոր ու դիտւածական ինչ որ ալ ըլլայ, սակայն, այս զանազան բացատրութիւնները կը մասնաշնչէ տարբեր հասկացողութիւններ, զորս ունեցած է այլեւ այլ դարերու մէջ ապրած հրէութիւնը իր մարգարէներուն նկատմամբ:

Այս գաղափարը կ'արտայայտուի նաեւ Ս. Գրոց այն նշանակելի հատուածին մէջ, ուր Տեսանող ու մարգարէ բառերուն գործածութեան մասին սա թանկագին ծանօթութիւնը կը տրուի. «Եւ յառաջ ի մէջ Իսրայելի այսպէս աւ էր իւրաքանչիւր որ յորժամ երթայր հարցանել զԱստուած. «Եկայք երթիցուք առ տեսանողն. զի զմարգարէ (նապի) յառաջ տեսանող (բոեհ) կոչէր ժողովուրդն»: (Ա. Թ. Գ. Թ. 9): Այսպէս, ուրեմն, մեր այս համարին հեղինակը կ'ուզէ հասկցնել թէ Տեսանող եւ մարգարէ անունները գործածութեան տեսակէտով ժամանակակից չեն եղած: Թերան (Hist. du peuple, d'Israël, . I. T P.

(1) Եբր. Բոեհ, կը նշանակէ նմարող, տեսանող, եբր. բուան = նշմարել տեսնել բայէն: Եբր. նապի կը նշանակէ, = խօսող՝ հառող, մեկնիչ. իսկ Եբր. խոզեհ կը նշանակէ տեսիլ տեսնող՝ տեսանող: Այս երեք ձեւերն ալ միասնաբար կը գտնուին: Ա. մնաց. ԻԹ. 29-ին մէջ, ուր Սամուէլ կը կոչուի բոեհ, Նաթան՝ նապի, եւ Գաթ, խոզեհ:

380.) կը տարակուսի եւ վստահ չի կրնար ըսել թէ բոեհն աւելի նախնազոյն անունը պիտի ըլլայ քան Նապին, ինչպէս մեր այս համարին զրիչը կ'ուզէ ներկայացնել: Արժէք մը չունի, սակայն, հաստատելու ճգնիլ թէ այս անուններէն մին կամ միւսը հնազոյն է, կամ անոնք երկուքն ալ ժամանակակից են: Անհրաժեշտաբար պէտք է ընդունիլ միայն թէ այս երկու բառերը մարգարէին կամ մարգարէութեան մասին երկու տարբեր ըմբռնութիւններ կը ներկայացնեն նոյն իսկ:

Այսպէս, ուրեմն, հրեայ ժողովուրդը իր խոզեհներուն մէջ կը տեսնէր հիացական (extatique) վիճակի մը, կամ տեսիլներու՝ երազներու միջոցաւ արտայայտուած տառուածային կամքին յայտնութիւնը, բոեհներուն մէջ կը տեսնէր ամէն զաղտնիքի թափանցող, ամէն բան նշմարող, ու ամէն խորհրդաւորութեանց մէջ Աստուծոյ մատն ու ներկայութիւնը տեսնող Աստուծոյ մարդը (այս Աստուծոյ), եւ իր Նապիներուն մէջ կը տեսնէր Աստուածային կամաց, Եանձէի յայտնութիւնը, Աստուծոյ խօսքին քարոզիչը, Աստուածային արդարութեան պատգամաբերը:

Հարկ է դիտել սա պարագան թէ Հրէից մարգարէն յունական մանթիսին կամ փրօֆիտիսին հետ չի չփոխուի երբեք. մանաւանդ փրօֆիտիսը, որ ինչպէս կազմութիւնն ալ կը ցուցնէ, ապագան նախագուշակող, նախապատմող իմաստը կը ներկայացնէ, եւ զոր չէ կարելի գտնել հրէական այն անուններուն մէջ, որոնք կը տրուին մարգարէից: Մեր հայերէն մարգարէ բառն ալ կը թուի բոլորովին հոգի ըլլալ յունական փրօֆիտիսի իմաստէն (1): Հրեայ մարգարէի պաշտօնին էական նկարագիրը կամ յատկութիւնը

(1) Մարգարէ բառին ստուգաբանութիւնը անորոշ է: Թերան ճիշդ ըլլայ ոմանց այն կարծիքը, որու համեմատ մարգարէ = Մերկուր (Mercure) ի մէկ ձեւը պիտի ըլլայ: Մերկուրը, Հերմէս, էր Աստուած գիտութեան: Արդէն Մերկուր կամ Հերմէս չկատուած ինչպէս միեւնոյն անուամբ ճանչցուած մոլորակը (= փայլածո), սեմական ժողովրդոց մէջ նաքո կամ նաքա անուամբ ճանչցուած կը թուի (տես Ժա ԻԶ. 1), նաքո, որ ինչպէս իր կոչումն ալ կը մասնէ, կարծես նաքի անունը կը յիշեցնէ:

կը կայանար «ոչ թէ ապագան գուշակելուն մէջ, ինչպէս յունական անունը կը ցուցնէ, կ'ըսէ Բոստ, եւ ինչպէս սովորաբար կ'երեւակայուի, այլ բոլորովին բարոյական ու կրօնական գործ մըն էր ան, մերթ քաղաքական, մերթ հայրենասիրական, երբեմն աստուածապետական եւ կամ անհատական. ճշմարիտ քարոզչութիւն (prédication) մըն էր ան եւ ոչ թէ միայն կանխապուշակութիւն (prédiction) մը (1):

Ո՛հ, Իսրայելի մարգարէներուն նպատակը ապագայի գուշակութիւնը չէր միայն: Ամենէն աւելի իրենց ժամանակի բարոյական ազնուացումին նուիրուած մարդեր են անոնք. եւ իրենց այս նկարագրովն է աւելի որ կարծես իրենց հայեացքը ապագային հետ կը խառնուի: Ապագայի համար ճշմարիտ ժողովուրդ մը կը պատրաստեն անոնք. գերազանց դաստիարակներ են իրենց ժամանակներուն համար: Անոնց նպատակը աստուածային արդարութեան տիրապետութիւնն է երկրի վրայ, արդարութիւն՝ որուն քարոզիչներն են Հրէաստանի մէջ: Շատ վերջերը միայն ապագայի գուշակութեան նկարագիր մըն ալ կը ստանայ երբայական մարգարէութիւնը, թէպէտ մի քիչ տարբեր՝ Պիւթեան պատգամներու բնութենէն, կախարդներու՝ դիւթիչներու՝ հմայողներու նկարագրէն, քաղեայներու՝ աստեղագէտներու՝ մոգերու շարլաթանութենէն: Երբայական մարգարէութիւնը շատ շուտով թօթափած է իր վրայէն նախնական ժողովուրդներու բարոյացական (caractéristique) այդ բոլոր աւելորդապաշտութիւնները, որոնց դէմ մաքառած ու կրցած է ջնջել նոյն իսկ Իսրայելի մէջէն:

ԳԷՈՐԳ-ՄԵՍՐՈՊ

(Շարունակելի)

(1) J. — Augustin Bost, Dict. de la Bible, art. Prophètes, p. 736 col. a,

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋ

ԳԱԽԱՌԷՆ ԶԱՅՆ ՄԸ

Սիրելի պաշտօնակիցներ

Անշուշտ կարդացած ըլլալու էք Տաճարի Ա. շրջանի 5րդ. եւ 8րդ. թիւերը, նամանաւանդ 33րդ. թիւի խմբագրականը, որով կը ձաղկուէր կղերներու անտարբերութիւնը՝ օգտուելու համար Օսմանեան Սահմանադրութեան ներկայացուցած գեղեցիկ առիթէն, նոյն իսկ իրենց իմացական մակարդակի բարձրացման, վտանգուած ապագայի մը եւ նիւթական անձուկ վիճակին բարելաւման տեսակէտներով:

Թերթիս տնօրէն-խմբագիրը՝ շատ իրաւացի գիտողութիւններէ վերջ՝ կ'աւելցնէր. «Ու եկեղեցականութիւնը կը քընանայ, չի՛ կազմակերպուիր, չի գործեր միասիրտ ոգիով մը, քրիստոնէական համերաշխութեամբ մը, աւետարանական սիրով մը:» Ու իր մատը բռն իսկ վերքին վրայ դնելով, Հայ. Առաքելական Ս. Եկեղեցիի անճարակ պաշտօնեաներու անհասկացողութեամբը այդ դարաւոր եւ փառայեղ շէնքին վտանգուելը մատնանշելով կը յարէր, ուղղելով խօսքը իր պաշտօնակիցներուն. «Եւ իր սթափումը ահաւոր պիտի ըլլար՝ կործանած հսկայ շէնքի մը տխուր աւերակներուն վրայ:»

Իմ կարծիքովս այս վերջին հատուածը մարգարէութեանց շարքին մէջ պէտք էր դասաւորել, եթէ Քրիստոսէ վերջ մարգարէութիւնը վերջացած չըլլար, (1) որովհետեւ ամէն վտանգ կարելի է գուշակել ո՛ր եւ է Հաստատութեան մը համար՝ որուն պահապան պաշտօնեան կը քնանայ մեռելային անտարբերութիւնով մը:

(1) Արթ. յօդուածագիրը կը չափազանցէ: Մարգարէ ըլլալու պէտք չկայ. քիչ մը ողջմտութիւն, քիչ մը ուշադրութիւն, եւ մանաւանդ քիչ մը սէր դէպ ի այն նուիրական Հաստատութիւնը որուն պաշտօնեաներն ենք, պիտի բաւէին յստակօրէն տեսնելու համար տխուր ճշմարտութիւնը:

Ծ. ԽՄԲ.

Ինչ կըցանք ընել մինչև հիմայ՝ մեր կոչումին՝ և պարտականութեանց պահանջումին համաձայնող արդիւնք մը երևան բերելու համար, այն տեսակ օրերու մը մէջ, յորում՝ յետին գիւղացին իսկ գիտցաւ միացնել իր խօսքերը՝ գործքին։ Ամէն դէպք իր գործը՝ յառաջացնելու, արհեստը արուեստացնելու, եւ եթէ չափազանցութիւն չըլլար՝ չոր փայտը ծաղկեցնելու փոյթ եռանդ մը ունի։ Իսկ մենք ժողովուրդէ թափուր եկեղեցիներու պահպանումին դերակատարներն ենք միայն։ Իցիւ թէ գէթ կարողութիւնը ունենալինք այդ սրբավայրէն դուրս վտարելու խաջագողները՝ որոնք կը սլքտան անոր շուրջ, պահպաններու անտարբերութեանէն, չըսելու համար անկարողութենէն քաջալերուած։

Թէեւ նորեկ մը՝ պաշտօնիս մէջ, բայց լաւ կը յիշեմ աշխարհական կեանքիս մէջ քսանէ աւելի տարիներ առաջ ժողովուրդին ունեցած ջերմ եռանդը հանդէպ եկեղեցիին և անոր պաշտօնեաներուն։ Եւրոնազարդ պաշտօնակիցներս կը յիշեն անշուշտ թէ աւելի տարիներ առաջ ժողովուրդը որքան անկեղծ հաւատքով ամրապինդ փարած էր եկեղեցիին։ Ամբողջ եկեղեցականութիւնը թող հաճի բազդատութեան դնելու պապը իւր թոռան և աւելի մօտը, հայրը իւր զաւկին հետ, և ահա, հակադարձ և անհոգ տարբերութիւն մը պիտի տեսնուի նոյն իսկ առաջին սերունդին մէջ։

Մեր պապեր շիններ են ներքին ու արտաքինով գեղեցիկ տաճարներ, աստուածասիրութեան տենչովը տոգորուած։

Մեր հայրեր նորոգներ են իրենց հայրենի և նուիրական ժառանգութիւնը՝ թէեւ քիչ մը տկարացած հաւատքով, բայց նոյն եռանդով։ Ցաւալի է որ ներկայ սերունդի ստուար մեծամասնութիւնը, հայրենի ժառանգութեան հաստատարիմ չըլլալէ զատ, չի հաճիր նոյն իսկ երգելն պոյնելէլ այն Հաստատութեան, ուր իրենց ծնողք անուշաբոյր խոնկերու վերելքին կը խառնէին իրենց անկեղծ ու սրտաբուխ աղօթքները՝ դէպ ի Տիեզերքն

ստեղծագործող ամենակարող, յաւիտեանական զօրութիւնը։

Եւ, աւա՛ղ, ատոնցմէ մաս մ'ալ, — թէեւ բարեխաղտաբար սակաւութիւն — ծիգ մ'ունի քանդելու այն Հաստատութիւնը, Որուն հողերը համակ շաղախուած են իրենց նախահայրերու։ Աւարիւնով, և Որուն հովանիին տակ հանգչող իրենց հայրերու ոսկորները կը սարստան դեռ չփտած պատանքներու մէջէն, այն Եկեղեցին, որ բիւրաւոր նահատակներու, խողջ խողուածներու փրփրադէզ արեան գետակներով մէ ոռոգուած, Որուն հովանիին տակ կուգան կազդուրուելու աշխարհի բոլոր տառապեալները, բոլոր վաստակեալներն ու բեռնաւորները։

Իսկ մենք, Եկեղեցականներս, ի տես այս ամէնուն, ներկայ ճգնաժամային վայրկեանին մէջ կը մնանք անկարելի, կը խորդանք եկեղեցոյ սենեկի մը անկիւնը՝ Մկրտութեան, Պատկի և Մեռելաթաղի սպասումներով։ Կարծես ասոնք են միայն մեր սուրբ կոչումի պարտադրած որքան ծանր նոյնքան քաղցր պահանջումները, հանդէպ այն հօտին՝ զոր արածելու պաշտօնը ստանձնելու ենք միանգամայն (անոր անուշիկ կաթն ու կակուղիկ բուրդը վայելելու համար արգիւր)։ Ամէն պարագայի մէջ սակաւութիւն բացառութիւնները կը յարգուին։

Ո՛չ, սիրելի պաշտօնակիցներ, ծիսակատարութիւն չէ՝ միայն մեր պաշտօնը։ Եկեղեցական արարողութիւններուն հետ չի լրանար մեր գործն ալ։ «Օրհնալք եղերուք, երթալք խաղաղութեամբ» չի նշանակեր քաշուիլ անկիւն մը, անտարբեր դիտելու անց ու դարձը և անզգայօրէն քրթմնակելու։ «Ինձ չէ փոյթ, զօգուտն ձեր դո՛ւք գիտէք։» Անոր, մեզի յանձնուած ժողովուրդին օգուտը՝ մեր գիտութեանէն կախում ունի, մեր շահը (Իկեթա՛ս կանն ըսել չեմ ուզեր) ո՛չ թէ անոնց կորուստին՝ այլ փրկութեանը մէջ կը կայանայ, քանի որ անաչառ դատաւորին առջև պատասխանատու ենք։ «Ձի՛նչ օգուտ է մարդոյ, եթէ զաշխարհ ամենայն շահեսցի և զանձն իւր տուեցեսցէ»։

Այս պատգամը թող սարսուղդէ այն պայերնիստ հովիւներուն՝ որոնք իրենց հօտը կը յանձնեն գիշատիչ Գայլերու վոհմակի մը. «Հովիւ քաջ զանձն իր դնէ ի վերայ ոչխարաց»: Յիսուս միայն իրեն համար ըսել ուզած է կը կարծենք այս խօսքերը: «Քանզի վարձկան է և չէ փոյթ վասն ոչխարաց»: Այս միայն կ'ուզենք որ դրոշմուած ըլլալ մեր ճակտին՝ սե տառերով:

Գաւառի խորերէն ուղղուած այս լալահառաջ տողերս թող խթան ըլլան իմ պաշտօնակիցներուս իբրեւ լեզուայ խոնարհ պաշտօնեայ մը, — քանի որ կուրծքիս տակ կը բարբախէ կրօնքի սիրովը զեղուն սիրտ մը — կ'ուզեմ ես ալ ձայնակցիլ Տ. Զարմայր հօր՝ արթնցնելու համար պաշտօնակիցներս, մանաւանդ կեդրոնի ուսեալ սակայն քանքարաթափոյց եղբայրներս — որոնք, թէ՛ իմացական և թէ՛ նիւթական կրկնակ կարողութիւններով կը գերազանցեն զմեզ — որպէս զի միասիրտ ու միահոգի, Ազգին գոյութիւնը պահպանող եկեղեցիին սրբութեանը գէմ բարբանջողներուն և զայն հիմն ի վեր տապալել ուզողներուն ընդդէմ՝ պատուար կանգնինք Աւետարանի ճշմարտութիւնով ու սիրով զինուած, եւ ոչ թէ վրիժառութեան դատապարտելի տենչանքէն մղուած, նման Արձան և Դեմետր քրմապետներուն՝ որոնք 8000 զօրքերով դիմադրութեան անզօր ու անօգուտ ձիգեր թափեցին Քրիստոնէութեան հսկայ բանակին դէմ:

Մենք ունինք Յիսուսի Ս. Գրօշակին տակ զինուորած, ճշմարիտ հաւատացեալներէ կազմուած մի ստուար բանակ, լաւ մարզուած Ս. Աւետարանի ճշմարիտ սկզբունքներով: Պէտք է անոր գլուխը անցնիլ անյապաղ, Յիսուսի Ս. Խաչը իբրեւ զինանշան, մեր Ս. հաւատքը, յոյսն ու սէրը իբրեւ տապանակը. նոր խաչադրեալ անոր քաղցր ու մնդուանուշ խօսքերը՝ իբրեւ փողերն Ահարոնեան՝ հնչեցունենք նոր Յրիքովի պարիսպներուն շուրջ՝ մինչև որ փշուրին անոր ամբողջութիւնները, տեղի

տալով Անծանօթին, Եհովայի՝ զօրութեանն առջև:

Ահա, այն պտեն միայն անթերի կատարած կրնանք ըլլալ մեր ուսերուն վրայ ծանրացած պարտականութեանց ամենանուիրակներ:

ԽՈՐԷՆ ՔՀՆՅ. ԳԱԼԵՕՆՃԵԱՆ
Եւդոկիա.

Մ Ա Հ

Պ՝ ԱՂԵՔԱՆԴՐ ՄԱՆՔԱՇԵԱՆԻ

Բեդերսպուրկէն հեռագիր մը կը գումէ մեծահարուստ բարերարին մահը. իր անհետացումը կորուստն է ինքնօգնութեան փայլուն տիպարի մը, որ սոսկ իր անձնական աշխատութեամբ եւ ձեռներէցութեամբ ձեռք բերած մեծագումար հարստութենէն կարեւոր բաժին մը հանած է աղքատ, կրթական, եկեղեցական եւ այլ ամէն բարենպաստակ հաստատութեանց նպաստելով լիարժեք: Պարզ խանութպանի մը զաւակ, եւ կերպարագէտի վաճառատան մը պաշտօնեայ 2 բլ. (25 դշ.) շաբաթականով, կրցած է աստիճանաբար բարձրացնել իր դիրքն ու լայնցնել իր նիւթական բարգաւաճման միջոցները, ըլլալով վերջապէս Բագուի նախագահութեան մեծահարուստ տէրը, նախ ի խանը, որու դիզած միլիոններն 30-40 ուլ կը հաշուէին: Վերջերս, սակայն, սահմանափակած էր իր գործունէութիւնները միայն քարիւղի վաճառականութեան մէջ, նեղ ու եղով գործաւորական խնդիրներէ:

Իր միլիոններէն օգտուեցան ազգն ու եկեղեցին, ու բազմաթիւ երիտասարդ ուսանողներ, որոնք իր ծախքով կրցած են եւրոպական համալսարաններու մէջ մասնագիտական բարձր կրթութիւն ձեռք բերել: Քսան-քսանըհինգ տարիէ ի վեր) տարեկան 50 չափ ուսանողներու ծախքը հոգացած է շարունակաբար, Ազգն իրեն կը պարտի Էջմիածնի մայր տաճարի նորոգութիւնը (40,000 բլ.): Թիֆլիզի վանուց Աւագ եկեղեցիին նորոգութիւնը (40,000),

Թիֆլիզի ներսեւեան հողեւոր դպրոցի կառուցումը (200,000). Թիֆլիզի առեւտր. Մանթաշեան վարժարանը՝ 5 դասարանով՝ եւ 250 աշակերտով՝ ցարդ իր ծախքով պահպանուած, Բարիզի Հայոց եկեղեցիին շինութիւնը (1,000,000 ֆր.)։ Աստուգմէ զատ նուիրած է՝ 20,000 ռբլ. անչափահաս յանցաւորներու, Հաճախեան արհեստանոցներու, եւ բնակարանաց շինութեան, 20,000՝ Կովկասահայոց բարեգործական ընկերութեան, 25,000՝ Թրքահայ սովետոց եւ գաղթականաց՝ զանազան ասիթներով, 5000՝ Թիֆլիզի Ս. Աստուածածին եկեղեցւոյն, 150,000՝ Էջմիածնի Վահարանի նորոգութեան, եւն. Ագաւաւաւս կ'իմանայ թէ հանգուցեալին հարստութիւնը կը հասնի 150 միլիոն ֆր.ի, որուն կարեւոր մէկ մասը կտակած է բարեգործական նպատակներու. կտակը այս պահուս կը գտնուի Թիֆլիզի 69 տարեկան էր։

*. Մահը տեղի ունեցած է Բեյերսպուրկի, ուր դացած էր՝ Բարիզ անցնելու համար։ Մարմինը զմոսուելով պիտի փութագրուի Թիֆլիզ, ուր պիտի ամփոփուի Վանքի եկեղեցւոյն գաւիթը։

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ԿՐԾՆ. ԺՈՂՈՎԸ կարգադուրկ հոչակեց Հայ-հոռմէականութենէ զարձած Շիրինեան Վ.Ը, իր գայթակղելի արարքներուն համար, Կէտիկ Փաշայի Տ. Գալուստ քհն. որ Աւագ Ուրբաթ օրը եկեղեցւոյ մէջ եւրիտասարդ մը ապտակած էր, վէճի բռնուած էր Աւագերէցին հետ բարձր ձայնով՝ եւ Զատիկին Գ. օրն ալ օրուան ժամարալն արգիլած էր պատարագելէ, երեք ամսուան փիլոնազրկութեան դատապարտեց։ Իսկ Աւագերէց Տ. Եղիա քհն. յանդիմանել որոշեց իր հեղինակութիւնը պահել չկրնալուն համար։

ՀԱՅ. ԲԱՐԵԳ. ԸՆԴՀ. ՄԻՈՒԹԵԱՆ հիմնարկութեան հիւպերորդ տարեգարձը տօնուեցաւ նախորդ կիրակի Գահիրէի մէջ չքեղ զաշտահանդէսով մը, որուն իշուս կազմեց միծատաղանդ երաժշտագէտ Կամիտաս Վ. Աղեքսանդրիայէն յատկապէս հրաւիրուած։ Վարչական ժողովի տեղեկագրէն կը հասկցուի թէ ամբողջ զրամագլուխը որ 1910 մարտ 1ին 14590 եգիպտ. ոսկի էր, Դեկտ. 31ին բարձրացած է 21519 եգիպտ. ոսկի. 15109ը հիմն. զրամագլուխ (անձեռնմխելի) Հիմնարկութեան ցայսօր Միութիւնը 16106 ոսկի նպաստ բաժնած է, որուն 1795ը վերջին շրջանին, որու միջոցին բացուած են 20 գիւղային նախակրթարաններ, բաց ի այն 60 որբերէն զոր կը պահէ իր ծախքով Կիլիկիոյ մէջ։ Անդամներուն թիւը որ 1910 Ապրիլ 30ին 2117 էր, Դեկտ. 31ին հասած է 3147ի, 450 եգիպտ. ոսկի ամսավճարով։ Միութեան մասնաճիւղերուն թիւը 31էն բարձրացած է 61ի։

ԷՋՄԻԱՄՆԻ Սինդիկատ հրահանգ տրուած է Կաթող. տեղակալ Արքեպիս կողմէ, շրջաբերականներով պատուիրել վիճակային կոնսիստորիաներուն որ այսուհետեւ ամուսնալուծական գործերու քննութեան ժամանակ նկատի առնեն եւ քննեն թէ ամուսինները քանի մասն է քանի աղջիկ դաւակ ունին, եւ ո՞վ պիտի հողայ դատինք մինչեւ չափահասութիւն։ Այս կէտը ստիպողաբար պէտք է յիշատակուած ըլլայ Սինդիկատ մատուցուելիք զեկուցագրին մէջ։

ՏԱՃԱՏ ՍՈԿԱՆԵԱՆԻ համար, երբեմն վարդապետ, որ կարգադուրկ ըլլալէ վերջ գրէթէ մուրացկանութեամբ կ'ապրէր, լըսուելով որ իսլամական կրօնը պիտի ընդունի, շրջաբերականով մը զեկուցուեցաւ անոր կարգադրկութիւնն եւ ատոր շարժառիթները, հարկ եղածը գրուելով նաեւ կրօնից տեսչին։ Միւս կողմէ Տաճատ Ոսկանեան Պատրիարքարանի բողոքած է թէ առանց զինքը լսելու եւ դատելու, ի՞նչպէս՝ մէկուն միւսին պահանջման վրայ դատապարտած են զինքը. հետեւապէս արդար որոշում մը կը պահանջէ։

ՍԵՐԱՍՏԻԱՅԷՆ առաջնորդ Պ. Թորգոմ Եպ. կը գրէ թէ Ապրիլ 9ի չք. օրը խժգոսելն եւ վատաբար սպաննուած են Յովհ. Քէլ Օհանէնեան եւ Եղբայրը խաչօ։ Սպանիչներուն խստիւ պատժուելուն համար Առաջնորդարանը ազգուօրէն բողոքած է կտուավարութեան մօտ։

Արամատէր ՀՄԱՅԵԱԿ ՔԶՆՅ. ԷՔՍԷՐՃԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԻՄԲԱԳԻՐ
ԶԱՐԲԱՅՐ ՔԶՆՅ. ԿԵՅԻՐԵԱՆ

ՏՊԱՐԱՆ Տ. ՏՕՂԱՄԱՐՃԵԱՆ

“ՏԱՃԱՐ”Ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոստյ եւ Գաւառաց՝ տարեկան	40 դրուց
Արսասանմանի համար	» 10 ծրանց
Ռուսիա	» 4 ռուբլի
Ամերիկա	» 2 օսլար
Ձեռքէ կը ծախուի պրակը	40 փարա

Հինգ բաժանորդ գտնողը իրաւունք ունի մէկ թերթ ձեռի ստանալու

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՆԵՐԸ ԿԱՆԽԻԿ ԵՆ

ԾԱՆՈՒՅՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՆ ԴԻԻՐԱՄԱՏՁԵԼԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ

«ՏԱՃԱՐ» ի թէ՛ վարչական եւ թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է զիմել առ Զարմայր Բանանայ Կեղիւրեան, Կ. Պոլիս, Պեթիկթաշ, Հայոց Եկեղեցի:

بشيكطاش ارمنى كليسا سنده « داجار » غزته سى مديرى پاپاس زارماير افندي

Rev. Père Zarmair Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache, Eglise Arménienne.

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ

«ՏԱՃԱՐ» ԿՐՕՆԱԹԵՐԹ

ԱՆԴՐԻՍՆՈՒՊՈԼԻՍ. — Առաջն. Փոխա-

նորդ Տ. Արսէն Բհնյ. Դերձակեան

ԱՂԵՔՍՍՆԴՐԻՍ. — Տ. Ռուբէն Բհնյ. Դա-
բկեան

ԱՄԵՐԻԿԱ. — Առաջն. Փոխանորդ Տ. Պո-
ղոս Վրդ. Դաֆթանեան

ԱՅԼԹԱՊ. — Տ. Դարեգին Բհնյ. Պողար-
եան

ԱՖԻՕՆ ԳՐԱՂԻՍՍԱՐ. — Տ. Խաչատուր
Ա. Բհնյ. Տօնէլեան

ԲԱՅԵՐԴ. — Մ. Սանոսեան էֆ.

ԴԱՂԱՏԻՍ. — Առաջնորդ Տ. Բարդէն Եպո.
Կիւլէսէրեան

ԴԱՀԻՐԷ. — Տ. Յարութիւն Բհնյ. Սար-
գիսեան

ԵՕՂԱՍ. — Առաջնորդ Տ. Խորէն Ծ. Վրդ.
Դիմաքսեան

ԵՐՁՆԿԱ. — Տ. Մեսրոպ Բհնյ. Թորոսեան

ՋՄԻԻՌՆԻՍ. — Տ. Յարութիւն Բհնյ. Տ.
Սարգսեան

ԷՍԿԻՇԷՀԻՐ. — Տ. Դալուստ Բհնյ. Տ.
Դալուստեան

ԿԱՐԻՆ. — Առաջնորդ Տ. Սմբատ Եպիսկ.
Սաատէթեան

ԿԻՐԱՍՈՆ. — Մաթոս էֆ. Թոքատլեան

ԿԻԻՄԻԼՃԻՆԷ. — Տ. Ներսէս Բհնյ.
Նշանեան

ՄԱՐԱՇ. — Տ. Հմայեակ Բհնյ. Վարժ-
պետեան

ՄԱՐՁՈՒՆ. — Յակոբ էֆ. Սրապեան

ՆԻԿՈՄԻԴԻԱ. — Տ. Ոսկի Բհնյ. Պիպիեան

Շ. ԳՐԱՂԻՍՍԱՐ. — Տ. Նաթան Բհնյ.
Տառեան

ՌԻՇԱՔ. — Կարապետ էֆ. Քէհեանեան

ՊԱՆՏՐՄԱ. ՊԱԼԸՔԷՍԻՐ. — Առաջնորդ Տ.
Կարապետ Եպիսկ. Մաղլըմեան

ՊԱՂՏԱՍ. — Առաջնորդ Տ. Մովսէս Ս.
Եպիսկ. Կէօմրիւքեան

ՌՈՒՍՃՈՒՐ. — Տ. Մկրտիչ Բհնյ. Մըրջ-
նիկեան

ՌՈՏՈՒԹՕ. — Առաջնորդ Տ. Դէորդ Ծ.
Վրդ. Ասլանեան

ՍԱՄՍՕՆ. — Առաջնորդ Տ. Սահակ Ծ. Վ.
Օտապաշեան

ՍԵՔԱՍՏԻԱ. — Առաջն. Փոխանորդ Տ.
Թէոփիլէ Բհնյ Օտապաշեան.

ՍԵԼԱՆԻԿ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Կարա-
պետ Բհնյ. Թուխմանեան

ՏԱՐՏԱՆԷԼ. — Տ. Դիմեախոս Բհնյ. Տրէդ-
եան

ՏԻՐԱՆԱԿԵՐՏ. — Դաւիթ էֆ. Մովսէս-
եան

ՏԻՄԷԹՐՍ. — Տ. Դէորդ Բհնյ. Թէրլեան

ՓԱՐԻՉ. — Հոգեւոր Տեսուչ Տ. Վառձա-
պուհ Բհնյ. Քիպարեան

ՔՂԻ. — Առաջնորդ Տ. Պաակ Վրդ.

ՖԻԼԻՊԷ. — Տ. Տաճատ Բհնյ. Դերձակեան

ՖՐԷՋՆՕ. — Յակոբ էֆ. Նշկեան

ՄՏԱՅՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

ԾԿՐՏՈՒԹԵՒՆ ՀԱՅՈՑ, ՎՐԱՑ, ԱԲ-
ԽԱՋԱՑ ԵՆ ԱԼԱՆԱՑ Ի ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԷ.

— Հայ եւ զրաքի ազգերու քրիստոնեայ
դառնալուն պատմութիւնը, որ բովանդա-
կելով հանգերձ Ագաթանգեղոսի պատմու-
թեան ընդհանուր գիծերը, աւելի սեղմ է եւ
տեղ տեղ ալ բոլորովին կը տարբերի անկէ
Ուսուցչապետ Պ. Ն. Մառ 1902ին Սինայի
Ս. Եկատերինէ վանքը այցելելու ատեն
հանդիպած է այս պատմութեան՝ արաբե-
րէն լեզուով՝ ձեռագիր, զոր լուսանկարած
եւ 1905ին հրատարակած է ռուսերէն
թարգմանութեամբ, յառաջաբանով, վեր-
ջաբանով եւ մանրակրկիտ ծանօթութիւն-
ներով։ Այս ռուսերէն թարգմանութիւնն
է որ այս անգամ հայերէնի վերածած է
էջմիածնի Միսրան Տ. ՅՈՒՍԻԿ ԱՐՔԵՊ.,
եւ Արարատի մէջ պարբերաբար հրատա-
րակելէ ետքը, առանձին հատորով հրա-
պարակ հանած է։ Բանասիրական եւ
պատմական ուսումնասիրութիւններով
զբաղողներու համար մեծապէս շահագրգռա-
կան գործ մը, որ օգտիւ կրնայ կարգա-
դրուիլ ամէն հայու կողմէ։ Գին 50 կոպեկ։
Տպագր. Վաղարշապատ, Մայր Աթոռոյ Ս.
էջմիածնի։

ՈՒՐԱՐՏՈՒ ԿԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԱ-
ԽԱՐԵՆԻԿԵՐԸ ԵՆ ԻՐԵՆՑ ՔԱՂԱՔԱԿԸՐ-
ԹՈՒԹԻՒՆԸ. — Քննական ուսումնասի-

րութիւն. — Գրեց ԴԷՈՐԳ-ՄԵՍՐՈՊ. —
Հայոց պատմութիւնը՝ աւանդական պատ-
մութենէն բոլորովին տարբեր, հին արձա-
նագրութեանց եւ գիտական նոր հետա-
զօտութիւններու վրայ հիմնուած։ Ուշագ-
րաւ գործ մը, պատուարեր երիտասարդ
հեղինակին, զոր ամէնէն անուպաստ պայ-
մաններու մէջ, զուրկ ճոխ մատենադա-
րաններու ընձեռած զիւրութիւններէն,
յաջողած է ի գլուխ հանել։ 216 էջ։ Օ.
Արղունման մաքուր տպագրութիւն. — Գին
10 ղշ.։

ՅՈՎՀԱՆՆԷՍ Գ. ՀԵՌԼԵԱՆ

ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

(Վկայեալ Կայսերական թեկական վարժարանն եւ
պատմական ասամբարոյժ կրօնք սպայից
վարժարանին)

Պեթիքաւ, Հայոց Եկեղեցիին ճիշդ դիմացը։

Կը դարմանէ ակռայի եւ լինտերու
ամէն տեսակ հիւանդութիւններ. կը չինէ
բնականին յար եւ նման ակռաներ փառ-
ջուի կամ ոսկի փշաքի վրայ։ Չափէն ա-
ւելի փտած ակռաները փռոտնէ կ'ընէ. կը
չինէ նաեւ dent à pont ամբողջ ոսկիէ
կամ քոռալոյնէ։

Հիւանդ կ'ընդունի Դշ. եւ Ուր. օրերը
առաւօտէն մինչեւ երեկոյ. ուրիշ օրեր ի-
րիկուն ժամը 12էն մինչեւ 3 (Ը. Թ.)։
Ատկէ դուրս մասնաւոր ժամադրութիւն։

Կիրակի օրերը մինչեւ կէս օր ձրի։